ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

ԴՐՈՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918 Թ. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Նշանավոր ռազմաքաղաքական եւ պետական գործիչ Դրաստամատ Կանայանի՝Դրոյի (1884-1956) գործունեության մի կարեւորագույն շրջան վերաբերում է 1918 թ. հայ-վրացական պատերազմին: Մայիսյան հերոսամարտերի ժամանակ փայլուն կերպով ղեկավարելով հայկական զորախմբերը ընդդեմ թուրքական բանակի Բաշ-Ապարանում, Դրոն մեկ անգամ եւս փայլուն է դրսեւորում իր ռազմական տաղանդը՝ այս անգամ արդեն հարեւան Վրաստանի դեմ սկսված պատերազմում:

1918 թ. մայիսին իրենց անկախությունը հռչակած Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ի հայտ եկան տարածքային հակասություններ, որոնք կապված էին թուրքական զորքերի՝ տարածաշրջանից հեռանալու եւ գերմանական զորքերի մուտքի հետ Վրաստանում: Վրացական իշխանությունները, օգտվելով իրենց համար ստեղծված նպաստավոր պայմաններից եւ օգտագործելով գերմանական իշխանությունների աջակցությունը, ձգտում էին արագորեն լուծել հարեւան երկրների հետ իրենց ունեցած տարածքային վիճելի խնդիրները՝ ցանկանալով գրավել նաեւ հայաբնակ Լոռի-Փամբակի եւ Ախալքալակի շրջանները՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ ցարական իշխանության տարիներին հայաբնակ այս շրջանները մտել են Թիֆլիսի նահանգի կազմի մեջ[1]: Նշենք նաեւ, որ դեռեւս 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ, օգտագործելով Թիֆլիսը թուրքերից պաշտպանելու պատրվակը, վրացական իշխանությունները՝ հայկական կողմի համաձայնությամբ, ժամանակավորապես իրենց զորքերը մտցնում են Լոռի[2]: Աստիճանաբար սկսում է հասունանալ հայ-վրացական կնճիռը՝ կապված հայաբնակ, բայց Վրաստանի կողմից սեփական տարածք ընկալվող խնդրի շուրջ:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարի համաձայն թուրքական զորքերը պարտավորվում են հեռանալ Հարավային Կովկասից, միեւնույն ժամանակ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը, թուրքական արշավանքից հետո, գտնվում էր մի դժվարագույն ռազմաքաղաքական եւ սոցիալ-տնտեսական վիճակում: Ահա այս պայմաններում է, որ առավել կարեւորվում է Դրոյի ռազմաքաղաքական գործունեության այս շրջանը: Մի կողմից դեռ չավարտված 1-ին համաշխարհային պատերազմը, մյուս կողմից Ադրբեջանի հավակնությունները հայկական տարածքների նկատմամբ, բազմահազար հայ գաղթականության առկայությունը, տնտեսական շրջափակումները եւ սովը: Դրոն դժվարին պայմաններում կարողացավ հմտորեն համախմբել եւ ղեկավարել հայկական զինված

1 Տե՛ս **Ալ. Խատիսեան**,Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը,Բեյրութ, 1968, էջ 118:
2 Տե՛ս **Ն. Գեւորգյան**,Դրո:Դրաստամատ Կանայանի կյանքն ու գործունեությունը,Երեւան, 2007, էջ 65:

ստորաբաժանումները եւ Լոռվա հայությանը՝ պայքարելու հանուն հայկական պետականության եւ միասնական հայրենիքի:

Ինչպես հայտնի է, Բաշ Ապարանի ճակատամարտից հետո այս շրջաններում գործող հայկական զորամիավորումները կենտրոնանում են Իջեւան-Դիլիջան հատվածում, այստեղ է գտնվում նաեւ Դրոն՝ գործելով գեներալ-մայոր Սիլիկյանի ընդհանուր հրամանատարությամբ: Թուրքական զորքերի հեռանալուն զուգընթաց, ըստ ձեռք բերված պայմանավորվածության, հայկական զորքերը պետք է փոխարինեին վերջիններիս նաեւ Լոռվա տարածքում, եւ ի կատարումն այս պայմանի, Դրոյի հրամանատարությամբ գործող Լոռու ջոկատը հոկտեմբերի 18-21-ին գրավում է Դսեղ-Քոլագերան, ապա նաեւ անցնելով Սպիտակի լեռնանցքը՝ Ջալալօղլի-Վարդանլուր-Քարաքենդ ռազմագիծը[3] վրացական կողմի հավակնությունները այս շրջանների նկատմամբ կանխելու նպատակով:

Դրոյի կողմից անսպասելի եւ շատ արագ կազմակերպված այս գործողությունը առաջ է բերում անակնկալի եկած վրացական իշխանությունների խորը դժգոհությունը: Ոգեշնչված գերմանական աջակցությունից, Վրաստանի արտգործնախարար Գվարժալաձեն բավականին կոշտ ձեւակերպումներով մի բողոք-հեռագիր է ներկայացնում հայկական կողմին՝ հայտարարելով, որ քանի դեռ երկու երկրները չեն պայմանավորվել սահմանների հարցում, իր կառավարությունը «հայկական զորամասերի մուտքը Թիֆլիսի նահանգ կդիտի որպես թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»[4]: Այս անհեթեթ հայտարարությամբ վրացական կողմը ցանկանում էր կասեցնել Դրոյի կողմից հայկական այս շրջանները Հայաստանի Հանրապետության իրավասության տակ դնելու գործընթացը: Անհիմն համարելով հարեւան երկրի բռնած այս դիրքորոշումը, հայկական իշխանությունները, ի պատասխան, Դրոյի եւ գնդ. Ղորղանյանի առջեւ խնդիր են դնում հեռացող թուրքական զորքերի տեղաբաշխվածությունը փոխարինել հայկականով, ինչպես Լոռիում, այնպես էլ Ախալքալակում[5]: Սակայն, լսելով այս տարածքների նկատմամբ հայկական կողմի հիմնավորումները եւ տարածքային հարցերը բանակցությունների միջոցով լուծելու հորդորները, վրացական իշխանությունները, վայելելով Գերմանիայի աջակցությունը, ոչ միայն չէին պատրաստվում եւ կանգնել իրենց բռնած դիրքորոշումից, այլեւ դիվանագիտական շփումների ժամանակ էլ ավելի հանդուգն ձեւակերպումներով են հանդես գալիս՝ միաժամանակ սկսելով նաեւ ռազմական պատրաստություններ տեսնել, ինչի վառ արտահայտումն հանդիսացավ այս երկրի զինվորական նախարար Գեորգաձեի հոկտեմբերի 22-ի հեռագիրը Լոռիում գտնվող վրացական զրահագնացքների պետ Գոգվաձեին այն մասին, որ «Վորոնցովկա է շարժվում զորավար Ցիցիանովի զորամասը՝ բաղկացած մարտկոցներից եւ հետեւակայիններից», եւ որ նրա ժամանելուն պես նա կընդունի բոլոր զորքերի ընդհանուր հրամանատարությունը՝ իր առջեւ խնդիր ունենալով «մաքրագործել Բորչալուն մինչեւ Թիֆլիսի (այսինքն՝ ցարական Թիֆլիսի նահանգի - Հ. Օ.) սահմանները»[6]:

Ահա այս պայմաններում է սկսվում Դրոյի ռազմաքաղաքական գործունեությունը Լո-

3 Տե՛ս **Վ. Վիրաբյան**,1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը եւ կուսակցությունները, Երեւան, 2003, էջ 65:

4 Տե՛ս **Ս. Վրացյան**,Հայաստանի Հանրապետություն,Երեւան, 1993, էջ 216-217:

5 Տե՛ս **Հ. Գեորգյան**, նշվ. աշխ., էջ 278:

6 **Դրո**, Կենսագրական, Հուշեր, Վկայություններ, Երեւան, 1991, էջ 120:

ռիում, մի իրավիճակում, երբ Գերմանիայի խոստումներով ոգեշնչված վրացական իշխանությունները հանդես եկան ագրեսիվ դիրքորոշմամբ հայաբնակ շրջանների նկատմամբ՝ առաջնորդվելով ցարական Ռուսաստանի վարչապարածքային բաժանմամբ, որը ներկա իրողության պայմաններում չէր կարող որևէ իրավական հիմք ունենալ արդեն իսկ միջազգային սուբյեկտ հանդիսացող, նորանկախ Հայաստանի եւ Վրաստանի համար: Ուստի անհիմն են այն մեղադրանքները, թե Դրոն իր նախաձեռնողական գործունեությամբ եւ ռազմական միջոցառումներով հրահրեց հայ-վրացական պատերազմը[7], փեսակետ, որ հետագայում տարածում է գտնում, ըստ երեւույթին, քաղաքական դրդապատճառներով, ինչպես նաեւ վրացական իշխանությունների տարածած ստահոդ լուրերի ազդեցությամբ: Այսպես, օրինակ, Վրաստանի լիազոր-ներկայացուցիչ Մդիվանու՝ Դրոյին ուղղված հայտարարությունը՝ երկու երկրների միջեւ պատերազմ հրահրելու մեղադրանքներով[8]: Անհիմն ենք համարում այս բոլոր մեղադրանքները, քանզի չի կարելի «պատերազմի հրահրում» անվանել այն գործողությունները, որոնք ուղղված են հարեւան երկրի իշանությունների ոտնձգություններից սեփական հայրենակիցներին պաշտպանելու, նրանց անվտանգությունը ապահովելու եւ ի վերջո հայաբնակ գավառներում հայկական օրինական իշխանություն հաստատելուն ուղղված քայլերը: Ինչպես ցույց կտան հետագա իրադարձությունները, Դրոյի ձեռնարկած միջոցառումները եւ գործողությունները ոչ այլ ինչ էին, քան նորանկախ Հայաստանի Հանրապետության եւ հայաբնակ շրջանների բնակչության անվտանգությունը եւ պաշտպանությունը ապահովելուն ուղղված միջոցառումներ, մանավանդ որ դրա համար կային լուրջ հիմնապատճառներ: Վրաց զինվորների վերահսկողության տակ գտնվող շրջաններում հայ ազգաբնակչությունը պարբերաբար ենթարկվում էր ճնշումների եւ հետապնդումների, մասնավորապես դրանք սաստկացան հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Այդ ամիսներին բազմաթիվ են դառնում տեղի հայության դիմումները՝ ուղղված հայկական իշխանություններին, որոնցում առկա են բազմաթիվ փաստեր վրացական ռազմական իշխանությունների կողմից Լոռի-Փամբակում ցուցաբերած կամայականությունների եւ ճնշումների վերաբերյալ[9]: Ինչպես ցույց կտա դեպքերի հետագա ընթացքը, վրացական իշխանությունների բռնած անհաշտ դիրքորոշումը եւ ճնշումներն ու բռնությունները հայ ազգաբնակչության նկատմամբ, երկկողմ հարաբերությունները տանում էին էլ ավելի սրման: Այսպես, վրացական իշխանությունները հոկտեմբերի 22-ին վերջնագիր են ներկայացնում Լոռիում գտնվող Դրոյի զորախմբին՝ պահանջելով անհապաղ հեռանալ Լոռվա սահմաններից եւ ազատել Շահալի կայարանը, այս մասին Դրոն իսկույն եւեթ տեղեկացնում է Հայաստանի իշխանություններին եւ խնդրում կարգադրություններ անել տվյալ հարցի կապակցությամբ[10]:

Խնդրահարույց հարցերի շուրջ վրացական կողմի բռնած դիրքորոշումը, ըստ Հայաստանի նախկին վարչապետ, դեպքերի ականատես Ս. Վրացյանի համոզման, մեծապես պայմանավորված էր Գերմանիայի ցուցաբերած աջակցությամբ, ինչի մասին բացահայտորեն հայտարարել էր Վրաստանում Գերմանական զինվորականության ներկայացուցիչը

7 **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 118:
8 Տե՛ս **Կ. Սարդարյան**, Հայ-վրացական հարաբերությունները 1918-21 թթ., Երեւան, 2002, էջ 73:
9 Տե՛ս **Վ. Վիրաբյան**, նշվ. աշխ., էջ 103:
10 Տե՛ս **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 122:

Թ-իֆլիսում գտնվող Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին՝ ասելով, որ «պատերազմի դեպքում Գերմանիան անվերապահորեն կաջակցի իր դաշնակից Վրաստանին»[11]: Որպես արդեն փորձված գործիչ, Դրոյի համար եւս հստակեցվում է այն ամբողջական պատկերը, որ դեպքերի նման զարգացման դեպքում պատերազմը անխուսափելի կլինի, եթե իհարկե հայկական կառավարությունը պատրաստվում է պաշտպանել իր իրավունքները եւ տեղի հայ ազգաբնակչությանը: Ահա թե ինչու նա անընդմեջ հորդորում է կառավարությանը դիմել ակտիվ քայլերի՝ այս շրջանում հայկական շահերը պաշտպանելու համար:

Հայաստանի կառավարությունը, քննարկելով վրաց իշխանությունների ներկայացրած վերջնագիրը, որոշում է կայացնում չընդունել այն, սակայն միաժամանակ պատրաստակամություն է հայտնում ամեն ջանք գործադրել՝ երկու երկրների միջեւ զինված բախումից խուսափելու համար[12]: Սակայն սկզբունքային հարցերի շուրջ երկկողմ տարաձայնությունները, արտաքին միջամտությունները ոչ միայն հնարավորություն չեն տալիս երկու երկրներին հասնելու փոխհամաձայնության, այլեւ կողմերին տանում են պատերազմական գործողությունների դաշտ, հանգամանք, որը այլեւս ակներեւ է դառնում, եւ ինչին արդեն ի պաշտոնե պարտավոր էր եւ նախապատրաստվում էր նոյեմբերի 2-ից Դիլիջան-Ղարաքիլիսա զինվորական օկրուգի հրամանատար նշանակված Դրոն[13]:

Ամբողջ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին շարունակվող երկկողմ դիվանագիտական շփումները որեւէ էական արդյունք չեն տալիս: Միաժամանակ Լոռիում գտնվող հայկական եւ վրացական զինված ուժերի միջեւ գնալով ուժեղանում են բախումները, ավելի են սաստկանում հայկական գյուղերի ռմբակոծությունները, տեղում հաստատված վրացական իշխանությունների կողմից կատարվում են կամայական հարկահավաքումներ եւ պարտադրումներ՝ ենթարկվելու վրացիների կողմից ստեղծած իշխանության մարմիններին: Դեպքերը սկսում են զարգանալ անվերահսկելի ճանապարհով՝ էլ ավելի խորացնելով առճակատումը: Նման պայմաններում է, որ դեկտեմբերի 5-ին Վրաստանը զորք է մտցնում Ախալքալակ[14]: Ի պատասխան վրաց իշխանությունների նման ռազմական միջոցառմանը, Հայաստանի կառավարությունը, չնայած սոցիալ-տնտեսական եւ քաղաքական իր համար դժվարին իրավիճակին, երկրի փաստացի շրջափակմանը եւ արտաքին անբարենպաստ պայմաններին, այնուհանդերձ որոշում է կայացնում ամեն գնով պաշտպանել վիճելի դարձած տարածքներում բնակվող հայ ազգաբնակչությանը եւ այս որոշումից ելնելով էլ համապատասխան կարգադրություններ է ուղարկում հայկական զինված ուժերի հրամանատարին Լոռիում[15]:

Հաշվի առնելով առկա դժվարությունները, Դրոյին հաջողվում է կազմակերպել ինչպես իր ենթակայության տակ գտնվող հայկական կանոնավոր զորամասերի, այնպես էլ տեղի հայ ազգաբնակչության ուժերը՝ վրացական զորքերի դեմ հարձակում սկսելու եւ Լոռին ազատագրելու նպատակով: Նախ առաջին քայլը կատարվում է դեկտեմբերի 11-12-ին, Դրոյի հրամանով հայկական մի ստորաբաժանում Ալեքսանդրապոլից մտնում է Ախալքա-

11 **Ս. Վրացյան**, նշվ. աշխ., էջ 217:
12 **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 122:
13 **Դրո**, անդ, էջ 121:
14 Տես **Ա. Մելքոնյան**, Ջավախքը XIX դարում եւ XX դարի առաջին քառորդին, Երեւան, 2003, էջ 300:
15 Տես **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 127:

լակ եւ կարճատեւ մարտերից հետո ազատագրում է այս շրջանը[16], ապա մշակվում է Լոռիում գտնվող վրացական զորքերի դեմ ընդհանուր հարձակման ծրագիր:

Ծրագրվելիք ռազմական գործողություններում Դրոն իր հրամանատարության տակ ուներ շուրջ 6000-ի հասնող կանոնավոր հայկական զորք եւ մոտ երկու հազարի հասնող տեղի աշխարհազորային ուժերը, մինչդեռ հետագայում պարզ կդառնա, որ այս հայկական ուժերի դեմ վրացական կողմը, անընդհատ համալրումներ ստանալով, կենտրոնացրել էր շուրջ 12.000-ի հասնող մի զորաբանակ[17], դա այն պայմաններում, երբ հայկական զորքերի առջեւ խնդիր էր դրված վրացիներից մաքրելու հայկական տարածքները, այսինքն հայկական փոքրաթիվ ուժերը հանդես էին գալու որպես հարձակվող կողմ: Դրոն պետք է լուծեր անչափ բարդ խնդիր՝ չունենալով ոչ քանակական, ոչ էլ զենքի ու զինամթերքի որեւէ առավելություն, պարտության մատնել թվական գերակշռություն ունեցող հակառակորդին, ինչը եւ նա, ինչպես ցույց կտան հետագա դեպքերը, կատարեց շատ փայլուն կերպով:

Ըստ նախօրոք մշակված պլանի, Դրոյի զորախմբերը հարձակումը պետք է իրականացնեին Վորոնցովկա-Դրիվոլնոյե-Օփրեթ-Այրում գծով՝ երեք զորաշարքերով՝ աջ թեւում ունենալով գնդ. Կորոլկովի գունդը, կենտրոնում փ/գնդ. Նեցտերովսկու գունդը, ձախ թեւում՝ գնդ. Տեր-Նիկողոսյանի գունդը եւ պահեստային վաշտերը[18]: Դեկտեմբերի 13-ին Դրոն հարձակման հրաման է տալիս: Եռակողմ հարձակումը հենց սկզբից տալիս է իր դրական արդյունքը, ձախ թեւում գործող հայկական զորամասերը գիշերային հարձակմամբ գրավում են Վորոնցովկան եւ Դրիվոլնոյեն, կենտրոնում հայկական ուժերը մտնում են Սանահին կայարան, իսկ աջ թեւում՝ հաղթահարելով մեծաթիվ վրացական ուժերի եւ զրահագնացքի դիմադրությունը, հասնում են Հաղպատ՝ հաջորդ օրը գրավելով Այրում կայարանը[19]: Այսպիսով, Դրոյի մշակած հարձակման այս պլանը ռազմական գործողությունների առաջին իսկ օրը տալիս է իր դրական արդյունքները: Զարգացնելով հաջողությունը, հայկական զորամասերը դեկտեմբերի 15-ին գրավում են Ալահվերդին, վրացական ճակատի հրամանատար գեն. Ծուլուկիձեն պարզապես փախուստի է դիմում[20]: Այսպիսով վրացական ուժերը, պարտություն կրելով հայկական զորքերի հարձակման երեք ուղղություններում էլ, նահանջում են եւ սկսում են կենտրոնանալ Սադախլու կայարանի շրջանում: Հայկական զորքի հրամանատարը կատարում է Հայաստանի կառավարության կողմից իր առջեւ դրված խնդիրը՝ այն է ազատել Լոռվա շրջանը վրացական ներկայությունից:

Այս հաջողություններից հետո Դրոն փորձում է երկու երկրների միջեւ հակամարտությունը տեղափոխել դիվանագիտական դաշտ՝ պարզորոշ կերպով հերքելով պատերազմ հրահրելու եւ հարեւան երկրների միջեւ թշնամություն սերմանելու բոլոր մեղադրանքները, այսպես դեկտեմբերի 17-ին նա հեռագիր է ուղարկում վրացական հրամանատարությանը, որտեղ նշում է. «Ձեր կողմից ղեկավարվող զինվորների կողմից հայկական բնակչության նկատմամբ գործադրված ճնշումները անցնում են բոլոր հնարավոր սահմանները, որի հետեւանքով եւ եղել է հայկական կառավարության հրամանը՝ զենքի ուժով վերջ դնելու

16 Տե՛ս **Ա. Մելքոնյան**, նշվ. աշխ., էջ 301:
17 Տե՛ս **Վ. Վիրաբյան**, նշվ. աշխ., էջ 141:
18 **Դրո**, անդ, էջ 124:
19 **Ն. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 294:
20 **Վ. Մկրտչյան**,Դրո:Դասպրամատ Կանայան, Երեւան, 2004, էջ 63:

բոլոր կարգի ճնշումներին հայկական աշխատավոր գյուղացիության նկատմամբ» եւ կոչ է անում հեռանալ հայաբնակ տարածքներից եւ դադարեցնել արյունահեղությունը[21]:

Սակայն, ի պատասխան, վրացական իշխանությունները էլ ավելի են խորացնում հակամարտությունը՝ անհապաղ ուժեր կենտրոնացնելով Լոռիի ուղղությամբ: Դեկտեմբերի 18-ին Սադախլու է ժամանում անձամբ Վրաստանի զինվորական նախարարը՝ իր հետ բերելով օգնական զգալի ուժեր[22]: Այս անգամ հակառակորդին պարտության մատնելու համար Դրոն մշակում է գեն. Ծուլուկիձեի զորքերը շրջապատելու եւ վերջնականապես ջախջախելու ռազմական գործողությունների մի ծրագիր, համաձայն որի հայկական սպառաբաժանումների ձախ թեւը գնդ. Տեր-Նիկողոսյանի գլխավորությամբ պետք է շարժվեր Բոլնիս-Խաչեն գծից դեպի արեւելք՝ երկաթուղու կողմը, իսկ աջ թեւը՝ գնդ. Կորոլկովի հրամանատարությամբ հիմնական ուժերով պետք է անցներ Դամիա գյուղը եւ մտներ Սադախլուի շրջանում կենտրոնացած վրացիների թիկունքը[23]:

Ինչպես ցանկացած պատերազմական գործողության ժամանակ, այնպես էլ այս դեպքում հնարավոր չի լինում խուսափել տհաճ անակնկալներից, մասնավորապես առանց հրամանատարության կարգադրության, մի քանի հայկական զորամասեր անսպասելի գրոհով գրավում են Սադախլու կայարանը, սակայն օգնական ուժերի եւ զրահագնացքի օգնությամբ վրացիները կարողանում են ջախջախել այս ուժերը: Այս հանգամանքը վտանգի տակ է դնում Դրոյի մշակած հարձակման ծրագիրը, սակայն զորահրամանատարը արդեն կանգնած էր փաստի առջեւ, այժմ պետք էր գործել շատ արագ ու մտածված: Ստեղծված պայմաններում գնահատելով իրավիճակը, Դրոն որոշում է մասնատել Սադախլուում կենտրոնացած վրացական զորքը եւ հրամայում է գնդ. Տեր-Նիկողոսյանին դեկտեմբերի 21-ին հիմնական ուժերով գրոհել Արախլու գյուղի ուղղությամբ՝ հակառակորդի ուժերը դեպի իրեն քաշելու առաջադրանքով[24]: Համառ կռիվները շարունակվում են, ձգտելով վճռական բեկում մտցնել մարտերում՝ Դրոն որոշում է դեկտեմբերի 22-ին սկսել ամբողջական հարձակում՝ օգտագործելով իր տրամադրության տակ եղած վերջին՝ Ճոճկանի զորամասը, սա տալիս է իր դրական արդյունքը եւ հենց այս զորամասն էլ փոխտեղակալ Պետրոսյանի հրամանատարությամբ կարողանում է կոտրել հակառակորդի դիմադրությունը եւ մտնել Սադախլու[25]: Որոշակի վերախմբավորումներից հետո Դրոն դեկտեմբերի 23-ին վերսկսում է հարձակումը՝ այս գրոհի շնորհիվ վերջնականապես ապահովելով Սադախլուի գրավումը, ջախջախված վրացական զորքերի հրամանատար գեն. Ծուլուկիձեն փախուստի է դիմում[26]: Մարտավարական առումով փայլուն կերպով կազմակերպված ռազմական գործողությունների շնորհիվ, կատարելով հաջող ռազմերթեր եւ քողարկված զորաշարժեր, թեւային խաբուսիկ եւ ճակատային վճռական գրոհներ, Դրոն ևս մեկ անգամ դրսեւորում է զորավարի իր բարձր հատկությունները:

Իր կողմից, Հայաստանի կառավարությունը, դեկտեմբերի 24-ին ստանալով վրացի-

21 **Վ. Վիրաբյան**, նշվ. աշխ., էջ 156:
22 Տե՛ս Հ. Գեւորգյան, նշվ. աշխ., էջ 296:
23 Դրո, անդ, էջ 127:
24 **Ս. Վրացյան**, նշվ. աշխ., էջ 232-233:
25 **Հ. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 299:
26 **Վ. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 65:

ների պարտության մասին լուրը՝ հրավիրում է կառավարության նիստ եւ հանդես գալիս հայտարարությամբ, որ հայկական կողմը ազատագրել է հայկական տարածքները եւ առաջարկում է բանակցություններ սկսել Վրաստանի հետ՝ պատերազմին վերջ դնելու նպատակով[27]: Անտեսելով դիվանագիտական ջանքերը, վրացական իշխանությունները նոր ուժեր են ուղարկում ռազմի դաշտ, այս անգամ արդեն գեն. Մազնիեի հրամանատարությամբ: Վերջինս դեկտեմբերի 27-ին հարձակում է ծավալում Ծուլավերի եւ Սադախլուի ուղղություններով[28]: Ստեղծվում է բավական դժվարին իրավիճակ հայկական հրամանատարության համար, կռիվների ընթացքում հյուծված հայկական զորամասերը չէին ստանում որեւէ լուրջ համալրում, դրան նաեւ գումարվում է լռեցի կամավորների մասսայական հեռացումը ռազմի դաշտից, ինչը լուրջ խնդիր է դառնում ճակատի հրամանատարության համար:

Այժմ արդեն Դրոյի եւ իր ստորաբաժանումների առջեւ դրված էր մի կարեւոր խնդիր եւս՝ պաշտպանել գրաված դիրքերը մինչեւ հարցի դիվանագիտական հարթակ տեղափոխելը՝ պահպանելու համար ձեռք բերված առավելությունը: Հակառակորդը դիմում է ընդհանուր հարձակման՝ փոքր-ինչ հետ մղելով հայկական ուժերին: Նման պայմաններում է, որ ի վերջո երկու երկրների միջեւ, Մեծ տերությունների միջնորդությամբ, ձեռք է բերվում զինադադարի մասին համաձայնություն. այն պետք է ուժի մեջ մտներ դեկտեմբերի 31-ին, ժամը 24.00-ին: Սակայն լավ տեղեկացված լինելով վրացիների պատրաստությունների մասին, Դրոն հասկանում է, որ կռիվը դեռեւս ավարտված չէ, քանզի վրացիների կողմից կենտրոնացած մեծաթիվ ուժերը անգործ չէին մնա մինչեւ զինադադարի ուժի մեջ մտնելը: Հաշվի առնելով այս հանգամանքը, եւ հրամանատարության անընդհատ պնդումներից հետո, Հայաստանի կառավարությունը այս ռազմաճակատ է ուղարկում 600 զինվորից բաղկացած օգնական զորախումբ[29] եւ վերախմբավորելով իր ենթակայության տակ եղած ուժերը՝ Դրոն պլանավորում է մի հանդուգն գրոհով, մինչեւ զինադադարի ուժի մեջ մտնելը, վերջնականորեն ջախջախել գեն. Մազնիեի բանակը:

Դրոյի մտահաղացման համաձայն ճակատային հանդիպակաց եւ թեւերից տեղացող շրջանցիկ հարվածներով հայկական զորագնդերը պետք է արագ տեղաշարժերով օղակեին եւ ջախջախեին Սադախլուի շրջանում կենտրոնացված վրացական զորքը[30]: Պատերազմական գործողությունները շարունակվեցին ընդհուպ մինչեւ զինադադարի ուժի մեջ մտնելու ժամը՝ այն է ժամը 24.00-ն: Այս անգամ եւս, թեւ երկար մարտերի արդյունքում հյուծված եւ Ս. Վրացյանի վկայությամբ «տրեխաւոր» հայ զինվորականությունը, իր հրամանատար Դրոյի գլխավորությամբ, կարողացավ անել առավելագույնը այս իրավիճակում՝ անգամ գրավեց վրացիների վերջին զրահագնացքը եւ «միայն անգլիական միջամտութիւնը փրկեց վրաց մայրաքաղաքը հայերի գրաւումից»[31]:

Քննության չառնենք Ս. Վրացյանի այս շատ տարածված եզրահանգումը, քանզի դրա բուն էությունը այն չէր, որ Դրոն կգրավեր կամ չէր գրավի Թիֆլիսը, այլ այն էր, որ պատե-

27 **Կ. Սարդարյան**, նշվ. աշխ., էջ 85:
28 **Ն. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 303:
29 Տես **Ն. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 304:
30 **Դրո**, անդ, էջ 131:
31 **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հ. Դ, Բեյրութ, 1965, էջ 186:

բազմի ողջ ընթացքում ունենալով շատ ավելի նվազ ուժեր, նա կարողացավ տանել վճռական հաղթանակ:

Ի սկզբանե հայկական կողմը, չուներ ուժերի որեւէ առավելություն, եւ միայն հայ զինվորների եւ կամավորների ցուցաբերած անմնացորդ նվիրումը ռազմական գործողությունների ժամանակ, հայրենասիրական բարձր կամքը եւ իհարկե այդ ամենը կազմակերպող եւ գլխավորող Դրոն, հանդիսացան այս փայլուն հաղթանակների գրավականը: Հմտորեն կառուցելով իր մարտավարությունը, հաշվի առնելով տեղանքի ընձեռած հնարավորությունները, օգտագործելով տեղանքին շատ լավ ծանոթ հայ կամավորներին, Դրոն կարողացավ ոչ միայն մաքրել Լոռին վրացիներից, այլեւ ջախջախիչ հարվածներ հասցնել թվով իրեն մեծապես գերազանցող հակառակորդին՝ սերունդներին թողնելով հայ զինվորի աննկուն կամքի եւ անպարտելի ոգու՝ անգամ ամենադժվարին պայմաններում հաղթանակի հասնելու դրսեւորման մի անմոռանալի օրինակ, սեփական հայրենիքը պաշտպանելու պատրաստ զինվորի անվեհեր կերպար՝ հատկություններ, որոնք եւ Դրոն կարողացավ սերմանել իր զինվորների մեջ եւ հասնել ռազմական փայլուն հաղթանակների: Հայ զորավարը անգամ ի չիք դարձրեց այն մարտավարական սկզբունքը, որ պատերազմի ժամանակ վճռական հաջողության հասնելու համար հարձակվող կողմը պետք է ունենա առնվազն 2-3 անգամ առավելություն հակառակորդի նկատմամբ: Այս պատերազմը Դրոյի փայլուն հաղթանակն էր՝ անկախ այն արդյունքից, որ ձեռք բերվեց դիվանագիտական դաշտում արդեն պատերազմից հետո: Չափազանց կարեւոր էր Դրոյի ռազմաքաղաքական գործունեությունը Լոռի-Փամբակի հարցում:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հայ-վրացական պատերազմում Դրոն իր վրա դրված պարտականությունները կատարեց փայլուն կերպով՝ հայ զորավարի կեպարի եւ հայրենասիրական ոգու հարուստ մի դաս թողնելով սերունդներին...